ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 ապրիլի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

60
(2726)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 16



Իշխանական խմբակցության պատգամավորները շարունակում են մանիպուլացնել հանրությանը: Այսպես, Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գեւորգ Պապոյանն ապրիլի 18-ին հայտարարել է, թե 2008-17 թվականներին Հայաստանի ՀՆԱ-ն դոլարային արտահայտությամբ չի աճել: Պատգամավորի պնդմամբ՝պատերազմում պարտության պատճառը դա էր: FIP-ը, սակայն, նկատում է, որ երկու տարի առաջ նույն Պապոյանը, դարձյալ ԱԺ ամբիոնից խոսելով ներկա իշխանության տարիներին ՀՆԱ ցուցանիշի մասին, ներկայացնում էր այն դրամային արտահայտությամբ՝ պնդելով, որ 2007-ի համեմատ՝ 2020-ին երկրի ՀՆԱ-ն կրկնապատկվել է: Այսինքն՝ Պապոյանը իրենց իշխանությանը ձեռքբերում վերագրելու նպատակով ՀՆԱ աճը ներկայացնում էր դրամային արտահայտությամբ, քանի որ այդպես հնարավոր էր, 2007-ի համեմատ, կրկնակի աճ ներկայացնել: Միեւնույն ժամանակ, նախկին իշխանությունների օրոք ՀՆԱ ցուցանիշը պատգամավորը ներկայացնում է դոլարային արտահայտությամբ, քանի որ այդպես ՀՆԱ-ն չի աճել, ինչը, ըստ Պապոյանի, ձախողված տնտեսական քաղաքականության հետեւանք էր: Այսպիսով, Պապոյանը, քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված, մանիպուլացնում է  գործող ու նախկին իշխանությունների օրոք ՀՆԱ ցուցանիշները:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերին սպասվող ավագանու ընտրություններին ընդառաջ՝ ՔՊ-ում այս օրերին նախընտրական եռուզեռ է: Թեեւ ընտրություններին շուրջ չորս ամիս կա, բայց ՔՊ-ն իր ողջ կազմով լծված է քաղաքապետի իր թեկնածուի՝ Տիգրան Ավինյանի քարոզչությանը: Կարելի է ասել՝Հայաստանի ու Արցախի առջեւ ծառացած  անվտանգային լրջագույն խնդիրներն այս պահին մղվել են երկրորդ պլան. ՔՊ-ականները զբաղված են մայրաքաղաքում իրենց իշխանության պահպանման հարցով, սրա համար գործի է  դրվել ողջ ռեսուրսը: ՔՊ-ամերձ մեր աղբյուրնեից տեղեկացանք, որ Նիկոլ Փաշինյանն էլ է բավականին ակտիվ մասնակցում կազմակերպչական աշխատանքներին ու անձամբ համակարգում գործընթացը: ՔՊ վարչության ու նախաձեռնող խմբի նիստերն էլ այս օրերին գրեթե ամբողջությամբ նվիրված են առաջիկա ՏԻՄ ընտրությունների հետ կապված հարցերին: Ի դեպ, ՔՊ-ում գրեթե 100% վստահ են իրենց հաղթանակի վրա, հիմա աշխատանքներ են տանում «ջախջախիչ հաղթանակ» ապահովելու համար:



«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության ընտրությունների հարցի շուրջ գործընթացը կասեցված չէ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝իրավապահ համակարգը շարունակում է ներքին քննությունը  կուսակցության  ընտրությունների մասով, եւ ինչ-որ փուլում ՔՊ-ականներից ոմանք կգնան իրավապահների մոտ եւ բացատրություն կտան: Ինչպես հայտնի է, նոյեմբերի 4-ին իշխող կուսակցությունը պաշտոնապես հաստատեց, որ իր ղեկավար մարմնի ընտրությունների արդյունքները սխալ են հաշվարկվել, եւ, ստացված դիմումի հիման վրա, իրականացվել է քվեաթերթիկների վերահաշվարկ: Արդյունքում վարչության կազմից դուրս են մնացել իշխող խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը, փոխարենը նոր վարչության կազմում են պատգամավոր Արսեն Թորոսյանը եւ ԱԻՆ նախարար Արմեն Փամբուխչյանը: Հայտարարության մեջ այդպես էլ չի հստակեցվում՝ով է դիմել վերահաշվարկի համար (ըստ լուրերի՝Արսեն Թորոսյանը), ձայները կեղծվել են, թե անփութություն է եղել, կամ հնարավոր պատասխանատվության հարցը դարձել է քննարկման առարկա, թե ոչ: Այս հարցով զբաղվում են իրավապահները:



Կաշառքի գործով հետախուզման մեջ գտնվող, հոկտեմբերի 27-ի գործը քննած  նախկին դատավոր  Սամվել Ուզունյանի կինը՝Ալլա Հարությունյանը,  երեկ ներկայացել է Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն: Նախկին դատավոր Սամվել Ուզունյանին եւ կնոջը՝Ալլա Հարությունյանին պատկանող գույքերի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր: Նշենք, որ այն ժամանակ Երեւանի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սամվել Ուզունյանը քննել է 1999թ. «Հոկտեմբերի 27»-ի գործը: Նախկին դատավորին ու կնոջը հրավիրում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն՝ծանոթանալու գործի նյութերին, ներկայացնելու դիրքորոշում: Այս փուլում Գլխավոր դատախազությունը չի հրապարակում, թե որ գույքերը կամ ինչ չափի գումար է դիտարկվում՝ որպես ապօրինի ձեռք բերված եւ բռնագանձման ենթակա գույք: Ի դեպ, Ուզունյանը 2019 թվականից հետախուզման մեջ  է: Նա մեղադրվում է առանձնապես խոշոր չափով կաշառք տալու փորձին օժանդակելու եւ դատավորի կողմից առանձնապես խոշոր չափով կաշառք ստանալու դրվագներով: Մեղադրյալի կարգավիճակ ստանալուց հետո դատարանը նրան կալանավորելու որոշում էր կայացրել, սակայն Ուզունյանը լքել է պետական սահմանը, եւ նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու որոշում է կայացվել:

ՀԱՄԲԵՐԵՆՔ

# ՀԱՅԱՍՏԱՆՆ Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԻ

**«Ժողովուրդ» օրաթերթն Արցախում ստեղծված իրավիճակի վերաբերյալ զրուցել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վիգեն Խաչատրյանի հետ:**



**-Պարո՛ն Խաչատրյան, ապրիլի 23-ին Ադրբեջանը փակել էր Հայաստան-Արցախ այլընտրանքային ճանապարհին գտնվող Հակարիի կամուրջը՝ արդեն ամբողջական շրջափակելով Արցախը, այնտեղ նաեւ անցակետ է տեղադրել:**

Ինչպե՞ս կգնահատեք այս իրավիճակը, Հայաստանի իշխանություններն ի՞նչ քայլեր են անում այս ճգնաժամային իրավիճակի լուծման ուղղությամբ:

-Մեր արտգործնախարարությունը Հայաստանի վերաբերմունքի հետ կապված իր դիրքորոշումն արդեն հայտնել է: Ադրբեջանի քայլը միջազգային իրավունքի կոպտագույն խախտում է: Ռուսաստանի արտգործնախարարությունն էլ հայտարարություն է տարածել, փորձում են Ադրբեջանին համոզել, որ այդ քայլն անթույլատրելի է: Համբերենք, գուցե մեկ անգամ Ռուսաստանը հասնի հաջողության, չնայած ես թերահավատորեն եմ վերաբերվում դրան:

Այս իրավիճակը նաեւ Ռուսաստանի հեղինակության հարցն է, քանի որ ակնհայտ է՝ 5- կիլոմետրանոց գոտու պատասխանատուն Ռուսաստանն է, իսկ Ադրբեջանն անտեսում է Ռուսաստանի ներկայությունն այդտեղ:

Մենք էլ մեր հերթին պետք է փորձենք դիվանագիտական հարթակում համապատասխան ճնշումներով հաջողության հասնել, ինչը շատ դժվար է. ակնհայտ է, որ դա թեթեւ խնդիր չէ:

**-Դուք միայն խոսում եք Ռուսաստանի պատասխանատվության մասին, բայց Արցախի անվտանգության առաջին երաշխավորը Հայաստանն է, ուստի առաջինը հենց նա պետք է քայլեր ձեռնարկի այս հարցը լուծելու համար:**

-Նման դեպքերում ես ասում եմ՝ կարո՞ղ եք ասել՝ ինչ քայլ պետք է անի Հայաստանը, որ չի անում: Հայաստանը ինչ կարող է, դեռ մի բան էլ ավել անում է: Մեր միակ լծակը, որ կարող ենք գործի դնել, միջազգային ճնշումն է Ադրբեջանի վրա:

Մենք չենք կարող ստիպել Ռուսաստանին, որպեսզի կատարի իր պարտավորությունները. նա ինքն է որոշում՝ ինչ չափով կարող է կատարել դրանք: Մյուս կողմից՝ մենք պետք է մեր բանակը ուժեղացնելու մասին մտածենք. ռազմական բալանսը մեր ու Ադրբեջանի միջեւ շատ է խախտված, պետք է փորձենք վերականգնել այն:

**-Պարո՛ն Խաչատրյան, փորձագիտական շրջանակը, ինչպես նաեւ ընդդիմադիր դաշտն ասում են, որ Ադրբեջանին սադրանքներ իրականացնելու հիմք տալիս է Հայաստանի վարչապետն իր հայտարարություններով, երբ, օրինակ, ասում է, թե Հայաստանը Մադրիդյան սկզբունքներով ճանաչել է Արցախն Ադրբեջանի մաս, կամ խոսում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչելու մասին:**

-Մարդ պետք է շատ հեռու լինի փորձագետի կարգավիճակից, որ հայտարարի, թե Ադրբեջանն իր քաղաքականությունը վարում է՝ ելնելով հայկական կողմի հայտարարություններից: Իհարկե դա այդպես չէ:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԲԱՑ ՔՆՆԱՐԿՈՒՄ

# ԵՐԵՎԱՆԸ ՊԵՏՔ Է ՈՒԹ ՊԱՀԱՆՋ ԿԱՏԱՐԻ

**Երեւանը պետք է ութ պահանջ կատարի Ադրբեջանի հետ հարաբերությունները նորմալացնելու համար, այդ թվում՝ վերադարձնի սահմանամերձ ութ գյուղեր: Երեկ, ելույթ ունենալով ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բաց քննարկմանը, նշել է ՄԱԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցիչ Յաշար Ալիեւը:**




Նրա խոսքով՝ Հայաստանը պետք է կատարի իր միջազգային պարտավորությունները, ամբողջովին դուրս բերի իր զինված կազմավորումները Ադրբեջանի տարածքից, վերադարձնի Ադրբեջանի սահմանամերձ դեռեւս օկուպացված ութ գյուղերը, դադարեցնի ու ձեռնպահ մնա տարածքային պահանջներից:

Ինչ վերաբերում է Լաչինի ճանապարհի սկզբնամասում անցակետ տեղադրելուն, նա ասել է, որ դա Ադրբեջանի ինքնիշխան տարածքն է, եւ որ անցակետի տեղադրումը հիմնված է պետությունների տարածքային ինքնիշխանության եւ ամբողջականության հիմնարար սկզբունքների, անվիճարկելի իրավունքի, արտոնյալ եւ բացառիկ իրավասության եւ պարտականության վրա՝ ապահովելու իր սահմանների անվտանգությունն ու պաշտպանությունը:

## Ի՞ՆՉ Է ՄԱՆՐԱՄԱՄՆՈՒՄ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ

Արցախը Հայաստանին կապող մայրուղու վրա Ադրբեջանի կողմից անցակետ տեղադրելուց հետո Արցախի Շուշիի շրջանի Եղցահող, Հին Շեն, Մեծ Շեն եւ Լիսագոր համայնքների բնակիչները մնացել են լիակատար շրջափակման մեջ: Այս մասին հայտարարել է Արցախի պետնախարար Գուրգեն Ներսիսյանը: Նա նշել է, որ բնակիչները կտրվել են ինչպես Ստեփանակերտից, այնպես էլ Հայաստան մեկնելու հնարավորությունից: Պետնախարարի փոխանցմամբ՝ մինչեւ անցկետի տեղադրումը եւ ճանապարհը փակելը Մեծ Շեն համայնքից երեք անչափահաս երեխա, որոնցից մեկը՝ երեք տարեկան, մեկնել էին Գորիս, եւ այժմ նրանք չեն կարողանում վերադառնալ ծնողների մոտ: Նույնպիսի իրավիճակ կա նաեւ Լիսագոր համայնքում. համայնքի մի քանի բնակիչներ մնացել են Հայաստանում:

Նշենք, որ Ադրբեջանն ապրիլի 23-ից փակել է Հայաստանն Արցախին կապող Հակարիի կամուրջը, որը Լաչինի միջանցքում է՝ ռուս խաղաղապահների վերահսկողության գոտում: Բաքվից հայտնել են, թե տեղում նոր անցակետ են տեղադրել՝ պարզաբանելով՝ «անվտանգության նկատառումներից ելնելով»: Ադրբեջանի արտգործնախարարությունը մեղադրել է հայկական կողմին Լաչինի ճանապարհի անօրինական օգտագործման մեջ՝ նշելով, որ այն օգտագործվել է «զենքի եւ զինամթերքի տեղափոխումը, բնական ռեսուրսների եւ մշակութային պաշարների ապօրինի արտահանումը, ականների տեղադրումը» կազմակերպելու համար:

Իշխանություն-եկեղեցի պառակտումը: Այն, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությանը հաջողվել է ապականել եւ խեղել գրեթե բոլոր ոլորտները, ակնհայտ է. բազմիցս խոսվել է այս մասին: Թալանի վերադարձը թմբկահարելով՝ իշխանության եկածներին հաջողվել է խորը պառակտում մտցնել հանրության մեջ, բաժանել սեւերի ու սպիտակների, հատկապես հաջողվել է արցախցի-հայաստանցի բաժանարար ու կործանարար գծեր անել: Փաշինյանի իշխանությունը չի խորշում առաջին օրից ձեռնոց նետել Հայ առաքելական սուրբ եկեղեցուն: Սրա մասին են վկայում իշխող ֆրակցիայի պատգամավորների եւ անձամբ Փաշինյանի կողմից խորհրդարանի ամբիոնից պարբերաբար հնչող հայտարարությունները եկեղեցու վերաբերյալ: Ի դեպ, եկեղեցու դեմ արշավի առաջին ծիլերը երեւացել են հենց 2018թ.-ին, երբ պարբերաբար Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաժարականի պահանջով հրահանգավորված ակցիաներ էին իրականացվում Երեւանի փողոցներում: Հատկապես արցախյան 44-օրյա պատերազմից հետո քաղաքական ղեկավարությունն ու եկեղեցականները միասին չեն ներկայանում տարբեր արարողությունների: Դրա վառ ապացույցը նաեւ երեկ Ծիծեռնակաբերդ այցելությունն էր: Առավոտյան Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի համար հուշահամալիր էին այցելել ՀՀ իշխանությունները՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: Նրանց հեռանալուց հետո միայն Գարեգին Բ-ն եկեղեցու սպասավորների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդ եւ հիշատակի կարգ անցկացրեց: Նախկինում՝ մինչեւ հեղափոխությունը, բարձրաստիճան եկեղեցականները Ծիծեռնակաբերդ կամ այլ վայրեր այցելում էին միասին:

## ՆԵՐԿՐՈՒՄԸ ՈՐՈՇԱԿԻՈՐԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

Արցախի Հանրապետության կառավարության եւ ՌԴ խաղաղապահ զորակազմի ջանքերի արդյունքում երեկ հաջողվել է որոշակիորեն վերականգնել վերջին օրերին Արցախ-Հայաստան սահմանագծին ադրբեջանական ապօրինի անցակետի տեղադրման պատճառով խափանված հումանիտար բեռների ներկրումը Հայաստանի Հանրապետությունից:

Այս մասին իրազեկում է ԱՀ տեղեկատվական շտաբը:

Խաղաղապահների միջոցով ներկրված բեռի հիմնական մասը եղել է առաջին անհրաժեշտության՝ կտրոնային համակարգում ներառված սննդամթերք, որը վաղվանից մատակարարվելու է խանութներ, եւ քաղաքացիները կարողանալու են գնումներ կատարել:

Շտաբի գրառման մեջ նաեւ ասված է.

«Ինչ վերաբերում է առ այսօր չիրացված կտրոնների գործունեության ժամկետին, ապա հաշվի առնելով պետական նախարարի հանձնարարությունը խնդրին լուծում տալու մասին՝ լրացուցիչ աշխատանքներ են կատարվում այդ ուղղությամբ, եւ դրա վերաբերյալ հանդես կգանք առանձին հայտարարությամբ:

Հայցում ենք մեր հայրենակիցների ներողամտությունն ու ըմբռնումը՝ նույնիսկ կտրոններով նախատեսված ծավալի պարենը նշված ժամկետում չմատակարարելու համար, ինչը պայմանավորված է անգամ հումանիտար բեռների փոխադրման հանդեպ ադրբեջանական կողմի հարուցած լրջագույն խոչընդոտներով»:

## ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ Կառավարությունում երեկ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի շրջանակում քննարկվել է 2023թ. առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ընթացքը:

Ֆինանսների նախարարության կողմից ներկայացվել է ամփոփ հաշվետվություն՝ նշված ժամանակահատվածում պետական բյուջեի ծրագրերի եւ միջոցառումների ֆինանսական կատարողականի վերաբերյալ: Անդրադարձ է եղել ըստ գերատեսչությունների տրամադրված հատկացումներին եւ կատարված կապիտալ ու ընթացիկ ծախսերին: Զեկուցվել է 2023թ. առաջին եռամսյակում պետբյուջեի եկամուտների եւ ծախսերի ծավալի, ինչպես նաեւ ՀՆԱ-ի աճի գնահատականի մասին:

Նշված թեմաների շուրջ ծավալվել է քննարկում: Արծարծվել են մակրոտնտեսական զարգացումներին, 2023թ. պետական բյուջեի արդյունավետ իրականացմանը, ընթացակարգերի եւ օրենսդրական դաշտի լավարկմանը վերաբերող հարցեր, մտքեր են փոխանակվել հետագա անելիքների շուրջ: Վարչապետը կարեւորել է պետական բյուջեի՝ պատշաճ մակարդակով կատարումը եւ հանձնարարել հետեւողական լինել նախատեսված կապիտալ ու ընթացիկ ծախսերի, պետական առաջնահերթություն հանդիսացող ծրագրերի իրականացման հարցում:

ԱՐՑԱԽ

# ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ՝ ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**«Ադրբեջանի կողմից լրացուցիչ սահմանափակումները հանգեցրել են նույնիսկ նվազագույն ծավալի կենսական նշանակության ապրանքների ներկրման անհնարինության»,- երեկ հրավիրված խորհրդակցությանն ասել է Արցախի պետնախարար Գուրգեն Ներսիսյանը:**



Պետնախարարն ընդգծել է, որ ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ արդեն ամբողջովին խափանվել է հումանիտար բեռների եւ վառելիքի ներկրումը, ինչը լրացուցիչ դժվարություններ եւ սահմանափակություններ է առաջացրել բնակչության կարիքների բավարարման աշխատանքներում:

«Արդյունքում չենք կարողացել մատակարարել նույնիսկ կտրոններով նախատեսված ծավալը դրանցում նշված ժամկետում, որի պատճառով մենք հետաձգելու ենք կտրոնների գործունեության ժամկետը, որպեսզի մեր բնակչությունը կարողանա օգտվել այդ հնարավորությունից», - նշել է նա:

Անդրադառնալով Կարմիր խաչի միջազգային կոմիտեի բեռնափոխադրումներին՝ պետնախարարը տեղեկացրել է, որ արդեն երրորդ օրն է՝ դրանք նույնպես կասեցված են՝ հավելելով, որ Կարմիր խաչի ու ռուս խաղաղապահների միջոցով Արցախի քաղաքացիների հրատապ տեղաշարժի սկզբունքների մասով լրացուցիչ հստակեցումներ պետք է կատարվեն, որից հետո՝ նորություն լինելուն պես, կհայտարարվի. փոխանցում են պետնախարարի աշխատակազմից:

Ադրբեջանցիները կիրակի օրը փակել են Հայաստանն Արցախին կապող Հակարիի կամուրջը, որը Լաչինի միջանցքում է՝ ռուս խաղաղապահների վերահսկողության գոտում: Բաքվում հայտարարել են, թե տեղում նոր անցակետ են տեղադրել, ինչի մասին տեղեկացրել են ռուս խաղաղապահների հրամանատարությանը եւ ռուս-թուրքական մոնիտորինգի կենտրոնին:

ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք երկրները առանձին-առանձին մտահոգություն են հայտնել անցակետ տեղադրելու Ադրբեջանի որոշման կապակցությամբ՝ ընդգծելով, որ դա խաթարում է խաղաղության գործընթացը:

Միեւնույն ժամանակ Արցախի անվտանգության խորհրդի նիստից հետո նախագահ Արայիկ Հարությունյանը հայտարարել է, թե

քննարկման մասնակիցները որոշել են դիմել եռակողմ հայտարարության կողմերին եւ, հատկապես, Ռուսաստանի Դաշնությանը՝ անհապաղ քննարկումներ սկսելու Արցախի շրջափակման վերացման, ադրբեջանական անցակետի տեղադրման կանխարգելման եւ Արցախի ժողովրդի անվտանգության իրական երաշխիքների ապահովման շուրջ:

«Ակնկալում ենք ամենակարճ ժամկետում գործուն քայլեր Արցախի ժողովրդի առջեւ ծագած անվտանգային եւ հումանիտար հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, որոնց բացակայությունը թույլ կտա Արցախի իշխանություններին ու ժողովրդին որոշելու իրենց հետագա անելիքները»,- նշել է Հարությունյանը:

Պաշտոնական Բաքուն, մինչդեռ, հայտարարում է, թե այլեւս ավարտել է անցակետի տեղադրումը: Ադրբեջանական կողմն այս քայլը բացատրում է ճանապարհը վերահսկելու անհրաժեշտությամբ: Մինչ այդ՝ երեկ, Պաշտպանության նախարարությունը հաղորդել էր, թե, իբր, Շուշիի շրջանում ադրբեջանցի զինվորներ են տուժել հայկական կողմի տեղադրած ականների հետեւանքով: Հայկական կողմը հերյուրանք էր որակել այդ տեղեկությունը:

*Ն.Հ.*

ԼՈՒՐԵՐ

## Ի՞ՆՉ ՀԱՐՑԵՐ ԵՆ ՔՆՆԱՐԿՎԵԼՈՒ

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Կատրին Կոլոննան ապրիլի 26-28-ը կայցելի Հայաստան եւ Ադրբեջան:

Այդ մասին տեղեկանում ենք Ֆրանսիայի ԱԳՆ պաշտոնական կայքից:

Այցի շրջանակներում դիվանագետը կքննարկի Լաչինի ճանապարհին տիրող իրավիճակը:

Նախարարը Երեւանում կհանդիպի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հետ: Նա կայցելի Ջերմուկում Եվրոպական Միության դիտորդական առաքելության կենտրոնակայան:

Ֆրանսիացի դիվանագետը Բաքվում կհանդիպի նախագահ Իլհամ Ալիեւի եւ արտգործնախարար Ջեյհուն Բայրամովի հետ:

Ապրիլի 28-ին Կ. Կոլոննան կայցելի Վրաստան: Թբիլիսիում նախատեսված են հանդիպումներ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի եւ արտաքին գործերի նախարար Իլյա Դարչիաշվիլիի հետ:

## ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Երեւանի քաղաքապետարանում մի շարք նոր նշանակումներ են արվել: Այս մասին ապրիլի 25-ին՝ Երեւանի քաղաքապետարանում գործակարգավարական խորհրդակցության ժամանակ, հայտարարել է փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը: Նոր փոփոխություններով՝ Սիրեկան Օհանյանը նշանակվել է Երեւանի քաղաքապետի խորհրդական, Լիլիթ Յավուրյանը՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ Դավիթ Կարապետյանը՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար: Բացի այդ, Անդրանիկ Սեդոյանը նշանակվել է «Երեւան նախագիծ» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ

Բունդեսթագի մարդու իրավունքների եւ մարդասիրական օգնության հանձնաժողովի նախագահ Ռենատա Ալտը դատապարտել է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքում անցագրային կետի տեղակայումը՝ այն որակելով միջազգային իրավունքի խախտում:

«Լեռնային Ղարաբաղում՝ Հակարի կամրջի վրա ադրբեջանական նոր անցակետը հակասում է միջազգային իրավունքին եւ դժվարացնում է մարդկանց ազատ տեղաշարժն ու մատակարարումները տարածաշրջան: Ադրբեջանը պետք է հարգի մարդու իրավունքներն ու անհապաղ կյանքի կոչի ԱՄԴ-ի պահանջները»,- գրել է նա:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ

# ԿԱՍԵՑՐԵԼ Է ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

**Հայաստանն ապրիլի 21-ին Արդարադատության միջազգային դատարան է ներկայացրել իր առարկությունները Ադրբեջանի հայցադիմումի վերաբերյալ՝ ստանալով նաեւ իր հայցադիմումի վերաբերյալ Ադրբեջանի առարկությունները: Դատարանն, ըստ այդմ, կասեցրել է «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» եւ «Ադրբեջանն ընդդեմ Հայաստանի» գործերի քննությունը՝ մինչեւ ներկայացված առարկությունների վերաբերյալ որոշում կայացնելը:**




Այս մասին հաղորդագրություն է տարածել Միջազգային իրավական հարցերով Հայաստանի ներկայացուցչի գրասենյակը:

«Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի շրջանակներում Արդարադատության միջազգային դատարանում քննվող «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» եւ «Ադրբեջանն ընդդեմ Հայաստանի» դատական գործերով Հայաստանն իր ամբողջական հայցադիմումը՝ ընդդեմ Ադրբեջանի, ներկայացրել է Դատարան այս տարվա հունվարի 23-ին՝ միաժամանակ ստանալով նաեւ Ադրբեջանի ամբողջական հայցադիմումը՝ ընդդեմ Հայաստանի:

Դատարանի կանոնների համաձայն՝ պետություններն իրավունք ունեն ներկայացնել նախնական առարկություններ (Preliminary Objections) մյուս կողմի ամբողջական հայցադիմումի վերաբերյալ այն ստանալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում: Նախնական առարկություններով պետությունները բարձրացնում են Դատարանի իրավազորության բացակայության եւ հայցապահանջների անընդունելիության վերաբերյալ փաստարկներ եւ հիմնավորումներ:

Նախնական առարկություններ ստանալուց հետո Դատարանը, իր կանոնների համաձայն, կասեցնում է գործի ըստ էության քննությունը մինչեւ նախնական առարկությունների վերաբերյալ որոշում կայացնելը:

«Ապրիլի 21-ին Հայաստանը սահմանված ժամկետում ներկայացրել է նախնական առարկություններ Ադրբեջանի հայցադիմումի վերաբերյալ: Հայաստանի կողմից ներկայացրած նախնական առարկությունները վերաբերում են Ադրբեջանի հայցադիումում տեղ գտած պահանջների մեծ մասին: Միաժամանակ Հայաստանը ստացել է նաեւ Ադրբեջանի ներկայացրած նախնական առարկությունները Հայաստանի կողմից ներկայացրած հայցադիմումի վերաբերյալ:

Կողմերը հնարավորություն ունեն ներկայացնել իրենց դիտարկումները մյուս կողմի ներկայացրած նախնական առարկութունների վերաբերյալ Դատարանի կողմից սահմանվելիք ժամկետում»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

# ՏՈՆՈՅԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱՐԱԾԵԼ

**ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը հայտարարություն է տարածել, որում, մասնավորապես, ասված է. «Հաշվի առնելով ԱԺ քննիչ հանձնաժողովի (ՔՀ) նախագահի հայտարարությունը՝ հանձնաժողովի աշխատանքին իմ մասնակցության «վերապահման» վերաբերյալ, ինչպես նաեւ լրատվամիջոցներից ստացված բազմաթիվ հարցադրումները, ներկայացնում եմ մոտեցումներս ՔՀ գործունեության եւ իմ մասնակցության վերաբերյալ:**



Իրավունքներիս եւ ազատություններիս՝ անհեթեթ մեղադրանքով սահմանափակված լինելու պայմաններում ե՛ւ անձնապես, ե՛ւ իրավական առումով բացառում եմ մասնակցությունս ԱԺ ՔՀ աշխատանքներին:

Պատճառներից կարեւորագույնն այն է, որ 44-օրյա ռազմական գործողություններին վերաբերող, դրանց նախորդող, ինչպես նաեւ հաջորդող տեղեկատվությունը դասակարգված է, որին չեմ կարող տիրապետել անհիմն եւ ապօրինի կալանքի պատճառով:

Հանձնաժողովում հարցադրումներին ստույգ եւ լիարժեք փաստերով պատասխանելու համար անհրաժեշտ է լիարժեք տիրապետել նշված տեղեկատվությանը, որն ինձ հասանելի չէ, քանի որ 2020 թվականի նոյեմբերի 20-ից որեւէ առնչություն չունեմ ՊՆ գործունեության հետ, ինչպես նաեւ շուրջ 1 տարի 7 ամիս մեկուսացված եմ՝ շինծու քրեական գործով:

Արգելանք է դրված նաեւ լրատվամիջոցների հետ իմ անմիջական շփման վրա, այդպիսով սահմանափակված է անգամ թույլատրելիության սահմաններում լրագրողների միջոցով հանրության հարցադրումներին արձագանքելու հնարավորությունս:

Անկախ փորձագետների եւ ԱԺ ընդդիմադիր խմբակցությունների ներկայացուցիչների բացակայությունը ՔՀ նիստերին ոչ միայն հարցեր է առաջացնում վերջինիս աշխատանքի անկողմնակալության վերաբերյալ, այլեւ պարարտ հող է հանդիսանում քաղաքական շահարկումների, զրպարտանքների եւ դիլետանտական բամբասանքների շարունակության համար:

Վերջապես, ՔՀ նախագահող անձը չի կարող անաչառ լինել իր գնահատականներում՝ հաշվի առնելով 2020 թվականի նոյեմբերի 9-ից հետո իմ եւ Զինված ուժերի հասցեին իր կողմից արված անպատասխանատու հայտարարությունները, որոնց մասամբ արձագանքել էր Պաշտպանության նախարարությունը 2020թ. նոյեմբերի 17-ին եւ 2020թ. նոյեմբերի 19-ին:

2021 թվականի հունվարին «Մեդիամաքս»-ին տված հարցազրույցում թույլատրելիի սահմաններում անդրադարձել եմ 44-օրյա պատերազմին վերաբերող հարցերին:

Ինչպես ասել եմ դեռեւս 2020թ. նոյեմբերի 20-ի իմ ուղերձում, պատրաստ եմ կրել իմ բաժին պատասխանատվությունը, ուստի առաջարկում եմ իմ եւ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ անցկացնել Քննիչ հանձնաժողովի բաց, հանրային նիստ, որի ընթացքում կպատասխանենք հանրությանը հետաքրքրող բոլոր հարցերին»:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

## ՆԱԽԱՁԵՌՆՎԵԼ ԵՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում օրենքով վերապահված գործառույթների իրականացման արդյունքում ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ պետական իրավասու տարբեր մարմիններին փոխանցվել է 287 նյութ, որոնց հիման վրա՝ նախաձեռնվել է 98 քրեական վարույթ:

Տնտեսական ոլորտում իրականացված խախտումների վերաբերյալ ՀՀ պետական իրավասու մարմիններ է ուղարկվել 66 նյութ, որոնց մի մասը դեռ գտնվում է քննության փուլում, դրանցից 19-ը՝ պաշտոնական դիրքի չարաշահումների եւ յուրացումների, 33-ը՝ տնտեսական գործունեության զանազան խախտումների, այդ թվում՝ մաքսանենգ կամ կեղծ ապրանքագրերով ներմուծումների, ինչպես նաեւ հարկերից

եւ տուրքերից խուսափումների, 10-ը՝ աշխատավարձի տրամադրում իրականում չաշխատող անձի, 4-ը՝ փոխհատուցման անօրինական տրամադրումների մասին:

Թմրանյութերի եւ հոգեմետ նյութերի անօրինական շրջանառության ոլորտում իրականացված խախտումների վերաբերյալ ՀՀ պետական իրավասու մարմիններ է ուղարկվել 23 նյութ, որոնց մի մասը դեռ գտնվում է քննության փուլում, դրանցից 17-ը՝ թմրանյութերի եւ հոգեմետ նյութերի մաքսանենգ ներմուծման կամ իրացման, 6-ը՝ թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի անօրինական օգտագործման

վերաբերյալ:

Նշված ժամանակաշրջանում ՀՀ ԱԱԾ քննչական գլխավոր վարչության քննիչների վարույթում եղել են 524 քրեական վարույթներ, որոնցից վարչության քննիչների կողմից նախաձեռնվել է 140 քրեական վարույթ, 39 քրեական վարույթ ստացվել է այլ մարմիններից, վերսկսվել է 53 քրեական վարույթ, իսկ թվով 292 քրեական վարույթ փոխանցվել է 2022 թվականից:

Հաշվետու ժամանակաշրջանում քննչական գլխավոր վարչության վարույթում քննված քրեական վարույթներից դատարան է ուղարկվել 30 քրեական վարույթ 46 անձանց նկատմամբ, կարճվել են 18-ը, 143 քրեական վարույթ ուղարկվել է՝ ըստ քննչական ենթակայության, 35 քրեական վարույթ միացվել է վարչությունում քննվող այլ քրեական վարույթների, 298 քրեական վարույթների նախաքննությունը շարունակվել է:

Հիշյալ ժամանակահատվածում ՀՀ ԱԱԾ քննչական գլխավոր վարչությունում նախաձեռնված եւ քննված քրեական վարույթներով, ըստ նախնական գնահատման, հանցագործությամբ պատճառված ընդհանուր վնասի չափը կազմել է 10.739.734.946 ՀՀ դրամ, որից պետությանը պատճառված նախնական վնասի չափը կազմել է 10.694.183.325 ՀՀ դրամ, իրավաբանական անձանցը՝ 38.591.621 ՀՀ դրամ, իսկ ֆիզիկական անձանցը՝ 6.960.000 ՀՀ դրամ: Ընդ որում՝ նշվածներից նախաքննության փուլում վերականգնվել է պետությանը պատճառած վնասից 43.036.149 ՀՀ դրամը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 21-ից 25-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 161 դեպք, որոնցից 10-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՏԱՔՍԻՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐ

Դիլիջան քաղաքը Երեւանից հեռու է մոտ 96 կմ: Դիլիջան-Երեւան եւ հակառակ ուղղությամբ գործող միկրոավտոբուսային երթուղու տոմսի գինը 1000 դրամ է: Դիլիջանցիները օգտվում են նաեւ Երեւան-Իջեւան միկրոավտոբուսային երթուղուց, որի դեպքում նույն գինն են վճարում՝ 1000 դրամ: Գործում են նաեւ հարկային դաշտում գրանցված եւ չգրանցված տաքսի ծառայություններ ու անհատ տաքսիստներ, որոնք մայրաքաղաքի ցանկացած կետից ուղեւորներին հասցնում են Դիլիջանի ցանկացած կետ եւ հակառակ ուղղությամբ: Այդ տաքսի ավտոմեքենաներից օգտվում են 4 ուղեւոր, ավելի մեծ ուղեւորներ տեղափոխող տաքսի մեքենաների դեպքում՝ ավելի շատ ուղեւորներ, որոնցից յուրաքանչյուրը վճարում է երկու հազար դրամ: Վերջերս տաքսիստները բարձրացրել են սակագինը. այդ տաքսի ծառայություններից օգտվողները արդեն վճարում են 2500-ական դրամ: Դա հարուցել է սոցիալական բազում խնդիրներ ունեցող Դիլիջան համայնքի բնակիչների դժգոհությունը, որոնք նշում են, որ, օրինակ, Երեւան-Վանաձոր հեռավորությունը ավելի քան 117 կմ է, այդ ուղերթում տաքսիների սակագինը 1500 դրամ է: Դիլիջան քաղաքից հայտնում են, որ դեռեւս գործում են քիչ թվով տաքսի ծառայություններ եւ անհատ տաքսիստներ, որոնք Դիլիջան-Երեւան-Դիլիջան ուղերթում ուղեւորներին տեղափոխում են 2000 դրամով, սակայն այդպիսի տաքսիների թիվը քիչ է, այդ ավտոմեքենաներում ազատ տեղ գտնելը դժվար գործ է:

## ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ ԵՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ հիմք ընդունելով 2022-2024թթ. ռազմավարական եւ 2022թ.-ի տարեկան ծրագրերը՝ 2022թ.-ի ընթացքում իրականացվել է տարեկան ծրագրով պլանավորված 30 աուդիտ: Աուդիտն իրականացվել է մարզի առողջապահական մի շարք հիմնարկներում, մարզի մի շարք հանրակրթական դպրոցներում, Տավուշի մարզպետարանի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչությունում, մարզպետարանի ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչությունում, մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնում, մարզպետարանի ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժնում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին ուղարկած տեղեկատվական հարցման մեջ հարցրել եմ, թե 2022 թվականին իրականացված աուդիտի արդյունքում այդ հիմնարկություններում ինչ խախտումներ, թերություններ են բացահայտվել: Մարզպետարանից ընդհանուր բնույթի պատասխան են տվել՝ նշելով. «Աուդիտի ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ հետագայում դրանք բացառելու համար»:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՄԵԿՆԱՐԿ

# ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

**Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, հաշմանդամություն ունեցող անձանց համար «Անձնական օգնականի ներդրման» պիլոտային ծրագրի շրջանակում, մեկնարկում է անձնական օգնականների տվյալների հավաքագրման գործընթաց՝ վերապատրաստումներին մասնակցելու, հավաստագիր ստանալու եւ որպես անձնական օգնական աշխատելու համար: ArmLur.am-ին այս մասին հայտնեցին Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:**



Գրանցման համար անհրաժեշտ է մուտք գործել հետեւյալ հղմամբ՝ https://bit.ly/3na80TA :

Դիմումները կարող եք ներկայացնել մինչեւ մայիսի 8-ը՝ժամը 18:00-ն:

Հիշեցնենք, որ Կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1264-Ն որոշման համաձայն՝ 2024 թվականի հունվարի 1-ից իրականացվելու է անձնական օգնականի տրամադրման ծառայություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու եւ համայնքում ներառվելու իրավունքի իրացման նպատակով:

Ծառայությունը ներառում է հաշմանդամություն ունեցող անձի խնամքը, այդ թվում՝ աջակցություն՝

-անձնական հիգիենան պահպանելու,

-սեփական առողջությանը հետեւելու, այդ թվում՝ դեղամիջոցներ ընդունելու, առողջ ապրելակերպ վարելու, բժշկական օգնություն ստանալու,

-սննդի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների, դեղերի գնումներ կատարելու,

-կենցաղային աշխատանքներ կատարելու (սննդի պատրաստում, բնակարանի, օգտագործված իրերի, հագուստի մաքրություն),

-այլ գործողություններ կատարելու եւ մի շարք այլ հարցերում, որոնք, անձի կարիքներից ելնելով, կամրագրվեն կնքված պայմանագրում:

Ծառայությունը հնարավորություն կտա նաեւ աջակցել հաշմանդամություն ունեցող անձին՝ հաղթահարելու միջավայրային արգելքները (այդ թվում՝ տեղաշարժման եւ հաղորդակցման):

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԽԱԽՏԵԼ ԵՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

⇨



Պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է 2023թ. մարտ ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտումներ թույլ տված հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվությունը:

2023 թվականի մարտ ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտում արձանագրվել է 851 հարկ վճարողի մոտ:

Հսկողական միջոցառումների արդյունքում ՀԴՄ կիրառման կանոնների խախտում թույլ տված հարկ վճարողներին ընդհանուր առաջադրվել է շուրջ 305.9 մլն դրամի չափով տուգանք:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱԿՏ

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի տասնյակ անդամներ ապրիլի 24-ին եւս մեկ անգամ Ներկայացուցիչների պալատ են ներկայացրել Հայոց ցեղասպանության կրթական ակտը. այս մասին հաղորդում է Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը:

Այս օրինագծով նախատեսվում է 5 տարվա ընթացքում 10 միլիոն դոլարի ֆինանսավորում տրամադրել Կոնգրեսի գրադարանին՝ ամերիկացիներին ուսուցանելու 1915-1923 թթ.-ին միլիոնավոր հայերի, հույների, ասորիների, քաղդեացիների, սիրիացիների, արամեացիների, մարոնիների եւ այլ քրիստոնյաների՝ Օսմանյան Թուրքիայի կողմից համակարգված ցեղասպանության մասին:

Ակտը ներկայացնելու նախաձեռնությամբ հանդես են եկել կոնգրեսականներ Աննա Էշուն, Դեյվիդ Վալադաոն, Թեդ Լյուն եւ Գաս Բիլիրակիսը: Նրանց միացել են նաեւ Ներկայացուցիչների պալատի 38 անդամներ: Միջոցը նախատեսում է ֆինանսավորել Կոնգրեսի գրադարանի կրթական ծրագրերը Հայոց ցեղասպանության պատմության, դրանից քաղած դասերի, հետեւանքների եւ դրա համար ներկայում վճարվող գնի վերաբերյալ:

Ակտի հեղինակներից Աննա Էշուն նշել է, որ Հայոց ցեղասպանության կրթական ակտը պահպանում է զոհերի ժառանգությունը, պայքարում ցեղասպանության ժխտման դեմ եւ ապագա սերունդներին դասեր տալիս պատմության այս մութ էջի մասին:

● *Անցած 4 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 47 ՃՏՊ. 6 մարդ զոհվել է, 60-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ




Ճանապարհորդություն դեպի ուրարտական աշխարհ. «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում վիրտուալ իրականության ակնոցով այսուհետ հնարավոր է տեղափոխվել հազարամյակներ առաջ ու մասնակցել պատմական իրադարձություններին:

6 րոպե տեւողությամբ վիրտուալ ճանապարհորդությունը 4 լեզվով է՝ հայերեն, ֆրանսերեն, անգլերեն եւ ռուսերեն: Զբոսաշրջիկները եւ այցելուներն իրենց նախընտրելի լեզվով կկարողանան ծանոթանալ պատմական ժառանգությանը:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի ամենամյա դրամաշնորհային ծրագրի հաղթողներից է:

«Ժամանակի մարտահրավերներին ընդառաջ՝ թանգարանները մշակում են տարբեր գործառույթներ, որ ավելի գրավիչ դառնան այցելուներին: Այս ծրագրի միջոցով կիրառելով նոր տեխնոլոգիաները՝ փորձ ենք արել, որ ցանկացած այցելու տեղափոխվի ուրարտական ժամանակաշրջան եւ ծանոթանա մեր պատմության սկզբնաղբյուրի որոշ դրվագների: Այդ ամենը կլինի տպավորիչ եւ հիշարժան»,- նշել է «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Աննա Գիշյանը:

«Շնորհիվ «Ստեփան Գիշյան» հիմնադրամի՝ այսօր հնարավորություն ունենք ունենալ աշխարհում ուրարտական թեմայով միակ VR ակնոցներն ու ծրագիրը: Մենք կրկին ցույց ենք տալիս, որ ուրարտական ժառանգության տերն ենք, իսկ այդ ժառանգությանը տեր են լինում ոչ միայն խոսքով, այլ նաեւ գործով: VR ակնոց կրելով՝ զբոսաշրջիկը դառնում է ուրարտական ծեսի մի մասը, հայտնվում է Էրեբունու «Սուսի» տաճարի շուրջ եւ մասնակցում հեղման ծեսին, այնուհետեւ տաճարն է քո աչքի առաջ կառուցվում, դպիրները սեպագրերն են կերտում: Այնուհետեւ մտնում ես տաճար եւ մասնակից լինում ծեսին»,- նշում է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Միքայել Բադալյանը:

«Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է «Ակբա» բանկի, ֆրանսիական «Կրեդիտ ագրիկոլ», «Կրեդիտ ագրիկոլ ազգային Ֆեդերացիա»-ի եւ Գիշյան ընտանիքի կողմից: Հիմնադրամի ծրագրերը ուղղված են հայ-ֆրանսիական կապերի ամրապնդմանը, Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտակրթական, մշակութային, առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ.

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արարատի մարզ, համայնք Նոր Կյանք, Ա. Խաչատրյան փողոց, 32 հասցեում գտնվող 156,19 ք.մ. բնակելի տուն, 84,31 ք.մ.ծածկ, 27,37 ք.մ. /53,71 խ.մ./ պարիսպ եւ 0,1004 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 24480000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Վեդի ք., Գայի փողոց, 9 շենք, 1 հասցեում գտնվող 42,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7900000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Գ. Բաշինջաղյան փողոց, 2-րդ նրբանցք, 8 շենք, 1 հասցեում գտնվող 64,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24700000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Շվեյցարական թաղամաս, 80 հասցեում գտնվող 98 ք.մ. բնակելի տուն եւ 0,032 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 6000000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 22-րդ փողոց, 18 հասցեում գտնվող 111,3 ք.մ. շինություն, 197,2 ք.մ. բնակելի տուն, 2,73 ք.մ. /5,5 խ.մ./ պարիսպ, 32,46 ք.մ. ինքնակամ շինություն եւ 0,09461 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 121000000 ՀՀ դրամ:

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Լալայան փողոց, 88/4 հասցեում գտնվող 76,64 ք.մ. բնակելի տուն, 3,2 ք.մ. /7,04 խ.մ./ պարիսպ եւ 0,04098 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 9130000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Արաբկիր, Մամիկոնյանց փողոց, 1ա շենք, 1/1 հասցեում գտնվող 108,1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 52320000 ՀՀ դրամ:

- Վայոց ձորի մարզ, համայնք Վայք, Վայք ք., Երիտասարդական փողոց, 1/1 հասցեում գտնվող 35,41 ք.մ. առեւտրի սրահ եւ 0,006 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 6140000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Արտաշատ ք., Ներսիսյան փողոց, 1 շենք, 17 հասցեում գտնվող 68,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19860000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Արտաշատ ք., Արագու փողոց, 1 շենք, 50 հասցեում գտնվող 60,98 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16740000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., Ջիվանու փողոց, 17 շենք, 12 հասցեում գտնվող 81,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14900000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր, Արմավիր ք., Ռ. Եղոյան փողոց, 12 հասցեում գտնվող 178,4 ք.մ. բնակելի տուն, 54,4 ք.մ. ծածկ եւ 0,0594 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14200000 ՀՀ դրամ

- Արմավիրի մարզ, համայնք Խոյ, գյուղ Արշալույս, 21-րդ փողոց, 39 հասցեում գտնվող 328,1 ք.մ. բնակելի տուն, 10,6 ք.մ. թոնրատուն, 2 ք.մ. զուգարան, 21,1 ք.մ. ծածկ, 20,5 ք.մ. /41 խ.մ./ պարիսպ, 20,6 ք.մ. ծածկ, 6,1 ք.մ. /10,4 խ.մ./ պարիսպ եւ 0,17865 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 41500000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 6-րդ թաղամաս, 15 շենք, 34 հասցեում գտնվող 77,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16400000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 4-րդ թաղամաս, 8 շենք, 5 հասցեում գտնվող 54,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12000000 ՀՀ դրամ:

- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Ասլանյան փողոց, 109/2 հասցեում գտնվող 239,96 ք.մ. բնակելի տուն, 93,01 ք.մ. մառան, 6,44 ք.մ. փուռ, 33,9 ք.մ. ավտոտնակ եւ 0,10986 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 22940000 ՀՀ դրամ:

- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Մայիսի 28-ի փողոց, 29/1 հասցեում գտնվող 17,72 ք.մ. ավտոտնակ, 65,73 ք.մ. խանութ եւ 0,06964 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 17120000 ՀՀ դրամ

- ք. Երեւան, Էրեբունի, Նուբարաշենի խճուղի, 5/4 շենք, 29 հասցեում գտնվող 76,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 26800000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Էրեբունի, Արցախի փողոց, 10գ շենք, 25 հասցեում գտնվող 75,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 35100000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Դավթաշեն, Դավթաշեն 10-րդ փողոց, 87/1 հասցեում գտնվող 331,4 ք.մ. բնակելի տուն եւ 0,04616 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 78600000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Արաբկիր, Ն. Ադոնց փողոց, 2/6, 8-րդ համալիր, 5-րդ մասնաշենքում գտնվող 64,9 ք.մ. թիվ 228/1 նախագծային բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 46240000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 12.05.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 08.06.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ԼՈՒՐԵՐ

## ԳՐԱՆՑԵԼՈՎ 62.5 ՏՈԿՈՍ ԱՃ

2022թ. Հայաստան Իրանի ոչ նավթային արտահանման ծավալը 294 միլիոն դոլարից հասել է 478 միլիոն դոլարի՝ գրանցելով 62.5 տոկոս աճ:

Նույն ժամանակահատվածում Իրանը Հայաստանի հետ փոխանակել է ընդհանուր առմամբ 1477 հազար տոննա ապրանք՝ 478 միլիոն դոլար արժեքով: Հայաստանի հետ առեւտրային հաշվեկշիռը կազմել է 450 միլիոն դոլար:

Իրանն ամենակարճ սահմանն ունի Հայաստանի հետ: Իրանի Արեւելյան Ատրպատական նահանգը սահմանակից է Հայաստանին. սահմանի երկարությունը կազմում է 44 կմ, իսկ սահմանային անցակետը Նորդուզն է:

Հեղուկ բնական գազը, երկաթը, պողպատ եւ բիտումը դեպի Հայաստան արտահանվող հիմնական ապրանքներն են, որոնք միայն կազմում են դեպի Հայաստան Իրանի արտահանման ընդհանուր արժեքի մոտ մեկ երրորդը (33%):

## 4 ԵՐԹՈՒՂԻ՝ ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ

Երեւանի քաղաքապետարանի ապրիլի 25-ի գործակարգավարական նիստում ներկայացվել են Հայաստան ներկրված ավտոբուսների՝ երթուղի դուրս գալու մասին նոր մանրամասներ:

Ըստ այդմ՝ զեկուցվեց, որ նախորդ շաբաթ շահագործման է հանձնվել 2 երթուղի՝ համար 40-ը եւ 67-ը: Վերջիններս երթուղի են դուրս եկել փոքր դասի ավտոբուսներով:

Մայիսի 1-ից նախատեսվում է շահագործման հանձնել եւս 4 երթուղի:

3-րդ համարի երթուղին կփոխարինվի MAN ավտոբուսներով. այն կուղեւորվի Նորքի 9-րդ զանգվածից մինչեւ Հարավարեւմտյան թաղամաս (ՀԱԹ):

18 համարի երթուղու «Բոգդան» ավտոբուսներին կփոխարինեն «Ժոնգ Թոնգ» ավտոբուսները՝ Սիլիկյան թաղամասից մինչեւ Օշական:

21 համարի «Պազիկ»-ների փոխարեն կշահագործվեն փոքր դասի ավտոբուսներ (Սարի թաղ):

47 համարի փոքր դասի ավտոբուսները կունենան երթուղու փոփոխություն: Նուբարաշեն վարչական շրջանից վերջնակետը կսահմանվի Տիտոգրադյան-Խաղաղ Դոնի փողոցների հատման հատվածը, երթուղին կփոխարինվի «Ժոնգ Թոնգ» ավտոբուսներով:

Եվս 2 փոքր դասի ավտոբուսներ կիրականացնեն Եռաբլուր-Բաբաջանյան փողոց անվճար ուղեւորություն:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԿՐԿԻ՞Ն ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՄԵԳԱՆ ՄԱՐՔԼԸ ՓՈԽԵԼ Է ԻՄԻՋԸ

**Մեգան Մարfլը երկար ժամանակ անց առաջին անգամ հայտնվել է հանրության աչfի առջեւ: Հանգստյան օrերին TED Talk-ում ցուցադրվել է Սաաեfսի դfսուիու մասնակցությամբ տեսանյութ: Նա ներկայացրել է իր մտերիմ ընկեր Միսան Հարիմանին, որը դասախոսություն էr կարդում: Այնուամենայնիվ, ամբողջ ուշադրությունը սեւեռվել է նրա վրա, fանի nr ներկայացել է նոր իմիջով:**



Մարքլը հանրությանը ներկայացել է անթերի ուղիղ շոկոլադագույն մազերով. այդ պահից ի վեր սկսվել են քննարկումները: Հասարակությունը բաժանվել է երկու ճամբարի. ոմանք ասել են, որ Հարրիի սիրելիին մազերի նոր գույնը սազում է, իսկ մյուսները սկսել են քննադատել նրան: Համացանցի որոշ օգտատերերի կարծիքով՝ Մեգանը կրկնօրինակում է Քեյթ Միդլթոնին: Իբր, դքսուհին կրկնօրինակել է Ուիլյամի կնոջը, աչքերի գույնը փոխելու համար օգտագործել է կոնտակտային լինզաներ: Ավելին՝ նրան մեղադրողներ կան պլաստիկ վիրահատության համար:

«Պլաստիկ վիրաբուժության նախագուշացու՞մ: Ցավալի է, որ Մեգան Մարքլը շատ է ուզում լինել Քեյթ Միդլթոն»:

«Աստված իմ: Մեգան Մարքլը, որը նախանձում է Ուելսի արքայադստերը, կրում է շագանակագույն կոնտակտային լինզաներ՝նրան նմանվելու համար»:

«Նա կարծես փորձում է լինել Քեյթը: Դա տեղի չի ունենա»: Սրանք մեկնաբանություններ են համացանցից:

Այնուամենայնիվ, եղել են այնպիսիք, որոնք պաշտպանել են Հարրիի սիրելիին:

«Մեգանը պլաստիկ վիրահատության չի դիմել: Ամեն ինչ լուսավորության եւ ռակուրսի մեջ է: Իսկ մազերի ուղղումն այն է, ինչ անում են շատ աֆրոամերիկացի կանայք: Սա ոչ մի կապ չունի «ծագման հետքերը ջնջելու հետ», - նշել է մեկնաբաններից մեկը:

ԼՈՒՐԵՐ

## ՇԱԿԻՐԱՆ՝ «ՏԱՐՎԱ ԿԻՆ»



Billboard-ի վարկածով՝ կոլումբիացի փոփ-սուպերաստղ Շակիրան «Տարվա կին» կճանաչվի Latin Women in Music գալա-երեկոյի առաջին միջոցառման ժամանակ:

Երկու ժամ տեւողությամբ հատուկ հոլովակ կա, որը նաեւ հայտնի է որպես Mujeres Latinas in la MOsica: Այն նվիրված է «լատինամերիկացի կին արտիստներին, ղեկավարներին ու ստեղծագործողներին, որոնք ակտիվորեն աշխատում են երաժշտական ոլորտում դրական փոփոխությունների, ներառման եւ գենդերային հավասարության ուղղությամբ:

Շակիրան երաժշտական արդյունաբերության մեջ է եղել դեռահաս տարիքից: Նա ունի 11 ստուդիական ալբոմներ, ինչպես նաեւ մի քանի լատինական «Գրեմմի»-ներ:

Աշխարհում վաճառված ավելի քան 95 միլիոն ձայնասկավառակներով Շակիրան ոչ միայն բոլոր ժամանակների ամենավաճառվող երաժշտական արտիստներից մեկն է, այլեւ Լատինական Ամերիկայի ամենավաճառվող երգչուհին՝ ըստ Billboard-ի:

## ՖԻԼՄԵՐԻ ՀԵՏԱՀԱՅԱՑ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 26-ից 30-ը Երեւանում տեղի կունենա ռուս հայտնի ռեժիսոր Անդրեյ Զվյագինցեւի ֆիլմերի հետահայաց ցուցադրությունը:Զվյագինցեւը եւ կինոքննադատ Անտոն Դոլինը կգան Երեւան՝ անձամբ հանդիսատեսին ներկայացնելու ֆիլմերը: Ռեժիսորի հինգ ֆիլմերը կցուցադրվեն իրենց ստեղծման հերթականությամբ՝ «Վերադարձ», «Աքսոր», «Ելենա», «Լեւիաֆան» եւ «Անսեր»:

Բոլոր ցուցադրությունները կանցկացվեն Կինոյի տանը՝ Հայաստանի ամենամեծ կինոդահլիճում:

Ֆիլմերը կցուցադրվեն ռուսերեն՝ հայերեն ենթագրերով:

Ռուս ռեժիսոր Անդրեյ Զվյագինցեւն արժանացել է Վենետիկի կինոփառատոնի գլխավոր մրցանակին, Կաննի կինոփառատոնի հաղթող է, Օսկարի կրկնակի հավակնորդ:

Անդրեյ Զվյագինցեւի աշխատանքները ճանաչված են ամբողջ աշխարհում եւ արժանացել են մեծ թվով տարբեր միջազգային մրցանակների, երկու ֆիլմ ընդգրկված է 21-րդ դարի 50 լավագույն ֆիլմերի վարկանիշում:

Ռեժիսորի ֆիլմերն անդրադառնում են միջանձնային կոնֆլիկտների հիմքում ընկած խորը սոցիալական խնդիրներին, պետական համակարգի հետ անհատի հարաբերություններին եւ աշխարհում մարդու տեղի որոնումներին:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

## ՆՈՐ ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔ՝ C–pos

«Կոնվերս բանկ»-ը, արձագանքելով բանկային համակարգում ժամանակակից միտումներին, կորպորատիվ հաճախորդների համար ներդրել է անկանխիկ վճարումների ընդունման նոր թվային գործիք՝ C-pos, որի օգտագործմամբ զգալիորեն կհեշտանա վճարումների ստացման գործընթացը, կկրճատվեն ծախսերը:

*C-pos-ը նոր խոսք է ծառայությունների եւ սպասարկման ոլորտում*

C-pos-ը նորարարարկան լուծում է՝ հավելված, որի շնորհիվ հնարավոր է սմարթֆոնն օգտագործել որպես POS տերմինալ եւ ցանկացած պահի ու վայրում ընդունել անկանխիկ վճարումներ սպասարկման եւ ծառայությունների ոլորտի ընկերություններում՝ մթերային կամ բանջարեղենի խանութում, սրճարանում կամ հաճախորդին առաքանին փոխանցելիս...

Այն հարմար է մեծ, միջին ու փոքր բիզինեսի համար, մատչելի է ու օգտագործման տեսանկյունից հարմարավետ: Որպես տերմինալ ծառայող հեռախոսը միշտ ձեզ հետ է. վճարումներ կարող եք ստանալ ցանկացած պահի ու վայրում: Հավելվածը ներբեռնելուց հետո POS տերմինալ կամ անկանխիկ վճարումների ընդունման համար որեւէ այլ սարքեր գնելու, սպասարկման համար հավելյալ ծախսեր կատարելու անհրաժեշտություն չի լինի:

*C-pos-ը հնարավորություններով չի զիջում սովորական ՊՈՍ տերմինալներին*

Բջջային հավելվածը նախատեսված է Android օպերացիոն համակարգով աշխատող սմարթֆոնների համար: Հավելվածով հնարավոր է՝

1.Հեշտությամբ ընդունել վճարումներ,
2.Վերադարձնել գումարը,
3.Ուղարկել վճարման անդորրագրերը էլեկտրոնային փոստով կամ sms-ով,
4.Դիտել վճարումների պատմությունը:

*Հնարավոր է ընդունել՝*

1.Անհպում վճարումներ Apple Pay, Google Pay, Samsung Pay եւ այլ դրամապանակներից,

2.NFC անհպում տեխնոլոգիայով աշխատող բանկային քարտերից,

3.Կարելի է օգտագործել ինչպես դեբետային, այնպես էլ կրեդիտային «ArCa», «MasterCard», «Visa» եւ «Mir» քարտատեսակներից:

*C-pos-ով վճարումներն անվտանգ են*

C-pos-ով անկանխիկ գործարքները երաշխավորված են միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգության համակարգերով:

*Բանկի հաճախորդ չլինելը C-pos-ից հրաժարվելու առիթ չէ*

Հավելվածից կարող են օգտվել ոչ միայն բանկի՝ իրավաբանական անձ հաճախորդները, այլեւ տնտեսվարողները, որոնք կբացեն բանկային հաշիվ «Կոնվերս բանկ»-ում, կկնքեն վճարումների սպասարկման պայմանագիր, կներբեռնեն ու կակտիվացնեն հավելվածը:

Մանրամասները՝ 010-511-211, conversebank.am:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

*● Ապրիլի 27-ին «Հայ-Արտ» մշակութային կենտրոնում տեղի կունենա «Վան Գոգ եւ Բենքսի» ցուցահանդեսը: Տոմսերի արժեքը՝3000, 3500 դրամ: Սկիզբը՝ամեն օր՝ժամը 10:00-ից 21:00-ն:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ է իրենից ներկայացնում հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագիրը:**

*Տիրուհի Մնացականյան (39 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Կ. Մնացականյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ վերականգնողական անհատական ծրագիրը՝ սահմանված որոշակի վավերապայմաններով եւ ձեւով, լրացման համար անհրաժեշտ դաշտեր պարունակող փաստաթուղթ է, որի համաձայն իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձի բժշկական, մասնագիտական եւ սոցիալական վերականգնումը:

Վերականգնողական անհատական ծրագիրը (ՎԱԾ) կազմվում է բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի կողմից հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու դեպքում: Վերականգնողական անհատական ծրագրում սահմանվում են վերականգնողական միջոցառումների ծավալները, տեսակները եւ ժամկետները, աջակցող միջոցների եւ այլ ծառայությունների տեսակները:

ՎԱԾ-ն ունի երաշխավորական բնույթ: Հաշմանդամություն ունեցող անձն իրավունք ունի հրաժարվելու վերականգնողական անհատական ծրագրով նախատեսված վերականգնողական միջոցառման տեսակից, ձեւից եւ ծավալից, ինչպես նաեւ ամբողջ ծրագրի իրականացումից:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նշենք, որ հաշմանդամություն եւ սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց տրամադրվում են աջակցող միջոցներ, որոնք են՝ պրոթեզներ (վերին եւ ստորին վերջույթի), կրծքագեղձի էկզոպրոթեզ, ակնագնդի պրոթեզ, ձայնաստեղծ սարքեր/պրոթեզներ, օրթեզներ, անվասայլակներ, գուլպաներ (անդամահատված ծայրատի համար), լսողական սարքեր, լսողական սարքերի անհատական ներդիրներ, աղեկապեր, սեղմիրաններ, հենակներ, ձեռնափայտեր, քայլակներ, ծնկակալեր, ռեկլինատորներ, կոշիկներ (օրթոպեդիկ, պրոթեզի, օրթեզի):

## ԲԱՆԿԱՅԻՆ

**ՀԱՐՑ. Բանկոմատից փորձել եմ կանխիկացնել աշխատավարձս, սակայն պարզել եմ, որ քարտիս ժամկետը արդեն մեկ ամիս է, ինչ լրացել է: Դրա հետեւանքով չեմ կարողացել ժամանակին կանխիկացնել գումարը: Ուզում եմ տեղեկանալ՝ արդյոք բանկը պարտավոր չէ ինձ տեղեկացնել քարտի ժամկետը լրանալու մասին:**

*Լարիսա Հունանյան (52 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ բանկն օրենքով պարտավորություն չի կրում տեղեկացնելու վճարային քարտի ժամկետը լրանալու մասին, քանի որ վավերականության ժամկետը նշված է քարտի վրա:

***Ֆինանսական համակարգի հաշտարար***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նշենք, որ հաճախորդն իրավունք ունի իր հաշվում առկա դրամական միջոցները տնօրինել իր հայեցողությամբ՝ բանկին հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու կարգադրություն տալով: Սակայն պայմանագրով նախատեսված դեպքերում բանկն իրավունք ունի հաճախորդի հաշվից անակցեպտ (անառարկելի) կարգով գումարներ գանձել՝ ուղղելով այն հաճախորդի՝ բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններին:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարն արվել է Երեւանում*



Երեւանի Օղակաձեւ զբոսայգու չորրորդ հատվածում տեղի ունեցավ Ազգային արժանապատվության ասպետներին նվիրված հուշարձանի բացումը:

«Նեմեսիս» գործողության հերոսների հուշարձանի բացման արարողությանը Երեւանի փոխքաղաքապետի պաշտոնը զբաղեցնող Տիգրան Ավինյանի ելույթի ընթացքում ներկաներից մի քանիսը սկսել են վանկարկել՝ «դա-վա-ճան»:

Քաղաքացիները բացականչել են նաեւ՝ «Արցա՛խ, միացո՛ւմ», սուլել են:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:


2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

### ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | Գիշեր | Ցերեկ |
|---|---|---|
| Շիրակ | 0 + 3 | +13 + 17 |
| Կոտայքի լեռներ | 0 + 3 | +13 + 15 |
| Կոտայքի նախալեռներ | + 6 + 8 | +17 + 19 |
| Գեղարքունիք | 0 + 3 | +11 + 15 |
| Լոռի | 0 + 5 | +15 + 18 |
| Տավուշ | + 6 + 10 | +18 + 22 |
| Արագածոտնի լեռներ | + 1 + 4 | +10 + 13 |
| Արագածոտնի նախալեռներ | + 6 + 9 | +16 + 20 |
| Արարատ | + 8 + 11 | +21 + 23 |
| Արմավիր | + 7 + 9 | +20 + 22 |
| Վայոց ձորի լեռներ | + 1 + 3 | +10 + 13 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 8 + 11 | +20 + 23 |
| Սյունիքի հովիտներ | + 9 + 12 | +23 + 27 |
| Սյունիքի նախալեռներ | + 8 + 11 | +16 + 19 |
| Արցախ | + 1 + 14 | +20 + 24 |
| Երեւան | +7 + 9 | +19 + 21 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*